

Եջս

Թիւ 3255  
Ապրիլ 24, 1958

Պատուարժան  
Ծխական Խորհուրդ  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Թոբանթօ.

Յարգելի Տիարք,

Առաջնորդ Արքազան Հօր յանձնարարութեամբ այսու ձեր  
ուշադրութեան կը յանձնենք, թէ ցարդ Առաջնորդարան չէք դրկած Ձեր  
տարեկան ծխական տեղեկագիրը:

Նորին Արքազանութեան հրահանգն է որ Ձեր ծխական տեղե-  
կագիրը Առաջնորդարան ղրկէք առաջին պատեհութեամբ, քանզի Թեմական  
Խորհուրդի համար անհրաժեշտ է իր տրամադրութեան տակ ունենալ թեմի  
բոլոր եկեղեցիներուն լրիւ ծխական տեղեկագիրները:

Լիայոյս ըլլալով որ պիտի սիրայօժար ընթացք տաք սոյն  
գիմումին, կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան  
Դիւանապետ Առաջնորդարանի